ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ 2014Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից նախապատրաստվել են անձնակազմի կառավարման գծով մարզպետի 10 որոշումներ, 54 կարգադրություններ և աշխատակազմի ղեկավարի 94 հրամաններ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N105-Ն որոշման պահանջները ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի անվանացանկում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ ստեղծվել է <<զորահավաքային նախապատրաստության>> բաժին:

Իրականացվել է 2 թափուր պաշտոնի համար մրցույթ: Մրցույթի արդյունքում հաղթած և պաշտոնի նշանակված քաղաքացիական ծառայողների համար սահմանված կարգով կազմվել են անձնական գործեր:

Աշխատակազմում 2 թափուր պաշտոններում կատարվել են արտամրցութային նշանակումներ:

Աշխատակազմի գլխավոր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողները տեղեկացվել են հերթական ատեստավորման համար:

Ապահովվել է թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և քաղաքացիական ծառայողների ատեստավորման մարզպետարանի իրավասությունը սահմանող օրենսդրական բնագավառի հարցաշարերի մշակման աշխատանքներ:

Սահմանված կարգով իրականացվել է աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված տարբեր ժամանակահատվածներում, երկշաբաթյա մասնագիտական վերապատրաստում են անցել աշխատակազմի թվով 6 քաղաքացիական ծառայողներ:

Ուսումնասիրվել է աշխատակազմի քաղաքացիական ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացված կիսամյակային հաշվետվությունները համապատասխան եզրակացություններով և ներկայացվել զեկուցագիր պարգևատրման գործընթացը կազմակերպելու համար:

Ապահովվել է օրենքով նախատեսված գործընթացների ժամկետների պահպանման աշխատանքները (թափուր պաշտոնների մասին ժամկետում ՔԾԽ տեղեկացնելու, քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակելու, քաղաքացիական ծառայության դասային աստիճան շնորհելու, քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու):

Մշտապես տեղեկատվա-վերլուծական ծրագրի միջոցով իրականացվել է աշխատակազմի հաստիքացուցակի և քաղաքացիական ծառայողների հետ կապված փոփոխությունների տրամադրումը քաղաքացիական ծառայության խորհուրդ:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքից ազատվել են 6 աշխատակիցներ, աշխատանքի են ընդունվել 4 քաղծառայողներ: Աշխատակազմում 2014 թվականի 1-ին կիսամյակում առկա է 1 թափուր և 2 ժամանակավոր թափուր հաստիքներ:

7 քաղաքացիական ծառայողների համար նախապատրաստվել է դասային աստիճանի շնորհման համար իրավական ակտեր:

Ապահովվել է աշխատողների արձակուրդների ժամանակացույցի կազմման և այն իրականացնելու աշխատանքները: Վերահսկվել է վարչությունների և բաժինների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարման աշխատանքները:

Աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին